ԱՌԱՋԱԲԱՆ

Ինչ որ մինչև այստեղ գրեցինք պարսից թագավորների պատմությունն է, որոնք (թագավորները) կոչվում են Շեյխօղլի: Սկսեցինք Ջհանշահ թագավորից 878 (1429)* թվից մինչև Շահ Սաֆի թագավորը 1083 (1634) թիվը քեզ հաղորդեցի թե սուտ, թե ճիշտ, որ լսել էի ի լրո: Այսուհետև կգրեմ այն, ինչ աչքով տեսա և ականջով լսեցի ներկա ժամանակի կատարյալ մարդկանցից, դույզն խոսքով կհիշեցնեմ գալիքներիդ օսմանցիների Մուրադ թագավորի Արարատ գալը և Երևան քաղաքի գրավումը: Ապա պարսից Սաֆի թագավորի գալը և նույն Երևանի հետգրավումը: Կհիշեցնեմ նաև մեր տառապանքը, որ կրեցինք, զի դուք մտաբերելով զգուշանաք և ձերը տեսնելով մեզ ողորմաք և լինեք ամեն ինչով ողջ ու առողջ:

ԳԼՈՒԽ Բ
ԱՄԻՐՋԱՆ ՏԱՆՈՒՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամիրջան անունով մի մարդ, որ հպարտ ու գոռոզ էր, ինքնահավան ու (ուրիշներին) ծաղրող: Քանզի ում որ իրենց գյուղի՝ Քանաքեռի տանուտեր էին նշանակում, նա անարգում ու ծաղրում էր՝ ասելով՝ գյուղի ավերող ու քանդող: Այս պատճառով բոլոր գյուղացիները միաբանվեցին և ասացին՝ եկեք սրան տանուտեր նշանակենք, թերևս սրա հպարտությունը սանձենք: Եվ այդպես էլ արին, նրան դրին Քանաքեռի տանուտեր: Մկրտիչ անունով մի մարդ, որ ճարտար էր ու լեզվանի, պարսկերեն իմացող, սաղմոսներ կարդացած ու մտքում պահած, սրան էլ նշանակեցին նրան քարտուղար, որպեսզի ինչ առևտուր լինի գյուղի համար, Մկրտչի ձեռքով կատարվի, և այն ամենը գրի առնի, որպեսզի ոչ մի բան զուր չկորչի:

* Տարեթիվը ճշտված է ըստ ռուսերեն հրատարակության: Տես՝ նշված գրքի 106 էջի ծանոթագրությունը:

Եվ այդպես հաշտ մնացին տանուտեր Ամիրջանն ու քարտուղար Մկրտիչը չորս տարի: Ինչ որ ծախվում էր, Մկրտիչը գրում էր թվականով և ամսվա օրերով: Այնպես եղավ, որ մի օր գյուղի մեծամեծները հավաքված էին և խոսում էին իրենց շահույթի մասին: Մկրտիչը նույնպես մի խոսք ասաց գյուղի օգտի մասին: Իսկ տանուտերը ըստ իր մեծասրտության և բարքի գոռոզության կատաղեց Մկրտչի վրա և ասաց՝ քեզ ո՞վ իրավունք տվեց հրապարակում խոսել: Մկրտիչը ասաց. ի՞նչ վնաս տվեց իմ խոսելը, որ դու այդպես զայրանում ես: Ամիրջանը մահակը բարձրացրեց նրա վրա և նրան կին հայհոյեց՝ կնոջը բոզ անվանելով: Մկրտիչը ոչինչ չասաց, այլ ելավ ու լռելյայն գնաց: Նրա հետ շատերը ելան: Մկրտիչը գնաց իր քեռու՝ Աղամ անունով տեգոր մոտ, որ մի պատվական ու խաղաղարար մարդ էր, և գանգատվեց նրան, որ իր կնոջը բոզ է ասել: Իսկ Աղամը նրան խրատեց՝ համբերել երկու օր, որպեսզի զղջա և քեզ կանչի: Նա համբերեց երեք օր, իսկ Ամիրջանը չկանչեց ու ոչ էլ նրա հետ հաշտ խոսեց, այլ մարդ ուղարկեց Մկրտչի մոտ բարկությամբ ու սպառնալիքով և ասաց՝ ինձ ուղարկիր առևտրի թղթերը: Իսկ Մկրտիչը ուղարկվածներին հետ դարձրեց անարգանքով և ասաց՝ ես նրա հրամանով չեմ գրել, այլ գրել եմ գյուղի ավագների հրամանով: Մկրտիչը այս ասաց և ելավ գնաց Աղամի մոտ: Իսկ Աղամը ասաց՝ այժմ դու գիտես, արա ինչ որ գիտես: Մկրտիչը գնաց իր համախոհների մոտ, որոնք երեք հոգի ավագներ էին՝ մեկի անունը Բարսեղ էր, որին կոչում էին Բիսցնող (Բուսցնող), երկրորդինը՝ Սարգիս էր, որին Մոծակ էին կոչում, երրորդինը՝ Ղազար էր, որին փալանդուզ (համետագործ) էին կոչում: Սրանց միաբանվեցին այլ ավագներ և գնացին, հավաքվեցին մի տեղ: Մարդ ուղարկեցին, կանչեցին տանուտերին և ասացին նրան՝ մենք հավաքվել ենք քեզ համար, դու պետք է հաշիվ տաս քո տանուտերության վերաբերյալ, իսկ նա լռել, չէր խոսում: Մկրտչին ասացին, կարդա ձեր առևտրամատյանը: Իսկ նա կարդաց այն ամենը, ինչ որ տվել էին տանուտիրոջ ձեռքը, մինչև իսկ մի ձուն էլ գրել էր: Նրա վրա կուտակեցին երեք տարվա հարկը երեք հարյուր քառասուն թուման և պահանջեցին հաշիվ: Իսկ Ամիրջանը գրգռված դևի կողմից՝ սկսեց հայհոյել նրանց և ասաց՝ դուք ի՞նչ շուն եք, որ ես ձեր խոսքով հաշիվ տամ, գնացեք խանից ոստիկան բերեք, որ նրա